ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
(1897—1914 ԹԹ.)

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

1877—1878 ԹԹ. ռուս-թուրքական պատերազմից հետո, Բեռլինի կոնգրեսի որոշման համաձայն, ռուսական զորքերի գրաված տերիտորիաների մի մասից (Կարսի սանջակը ամբողջությամբ, Զըլդրրի սանջակի մեծ մասը և Բասենի սանջակի մի փոքր մասը) ստեղծվել էր մի վարչական միավոր՝ «Կարսի մարզ» անվանումով, որը միացվել էր Ռուսական կայսրությանը։ Կառավարչական տեսակետից մարզը բաժանված էր չորս օկրուգների (Կարսի, Կաղզրվանի, Արդահանի և Օլթիի), մարզային կենտրոնն էր Կարսը։

Կարսի մարզի տարածքը ընդգրկող հատվածը վաղնջական ժամանակներից եղել է հայ ժողովրդի բնօրրաններից մեկը, որի բնակչության մեծամասնությունը կազմել են հայերը։

XVI—XVII դդ. Արևմտյան Հայաստանն ընկավ թուրքական բռնատիրության տակ։ Սկսած այդ շրջանից մարզի հայ բնակչությունը պարբերաբար ենթարկվում էր թուրքական սուլթանների կողմից իրականացվող ջարդարարության, տարրալուծման և բռնի գաղթեցման քաղաքականությանը։ Ինչպես Արևմտյան Հայաստանի այլ մասերում, այնպես էլ Կարսի շրջանում հայերի թվաքանակը աստիճանաբար նվազեց։

1828—1829 ԹԹ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևմտյան շրջաններից, այդ թվում նաև Կարսի վիլայեթից, ըստ պաշտոնական տվյալների, Արևելյան Հայաստան էին գաղթել 14047 ընտանիք կամ ավելի քան 90000 մարդ[1]։ Այդ մեծ գաղթի հետևանքով Կարսի մարզի տարածքի հայ բնակչությունը կրկին նվազեց, սակայն Ռուսաստանին միացվելուց հետո, կարճ ժամանակ անց, ստեղծված սոցիալ-տնտեսական և քաղաքական անհամեմատ նպաստավոր պայմանների շնորհիվ Կարսի մարզի բնակչության թիվը, և հատկապես հայերի թիվը, սկսեց արագ թափով աճել, որն իր հերթին նպաստեց արտադրողական ուժերի զարգացմանը։ Եթե 1878 թ. մարզում կար 140—150 հազար բնակիչ, ապա 1914 թ. բնակչության թիվը հասավ 391213 մարդու։

Կարսի մարզի ազգաբնակչության թվի և կազմի դինամիկան պարզ երևվում է այն տվյալներից, որոնք վերաբերում են 1897 թ. ընդհանուր մարդահամարին և առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին[2]։ Այդ տվյալների համաձայն Կարսի մարզի բնակչության թիվը 1897 թ. կազմում էր 290654 մարդ, իսկ 1914 թ.՝ 391213։ 17 տարվա ընթացքում մարզի բնակչության

---

[1] *Տե՛ս Ա. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 440—442։*

[2] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., LXIV, Карсская область», СПб., 1904; «Кавказский календарь на 1915 г.», Тифлис, 1914.

բացարձակ հավելաճը կազմում էր 100559 մարդ կամ 34,6 տոկոս, որը համարյա բացառապես բնական աճի հետևանք էր։

Ազգաբնակչության աճին համընթաց մեծանում էր բնակչության խտությունը։ Եթե 1897 թ. մեկ քառ. վերստի վրա բնակվում էր միջին հաշվով 17,48 մարդ[3], ապա 1914 թ.՝ 24,8 մարդ[4]։ Բնակչության խտությունը ըստ օկրուգների, կապված տեղագրական դիրքի և հողա-կլիմայական պայմանների հետ, ուժեղ տատանվում էր։ Ահա համապատասխան տվյալները.

Օկրուգները	Տարածությունը (վերստ)	Մեկ քառ. վերստի վրա (մարդ)	
		1897 թ.	1914 թ.
Կարսի	5083,8	26,3	34,6
Արդահանի	4917,9	13,4	19,1
Կաղզվանի	3843	15,4	21,0
Օլթիի	2621,2	12,0	15,3
Ընդամենը . . .	16465,9	17,48	24,8

Բնակչության խտության դինամիկան ցույց է տալիս, որ այդ տարիներին առավել խիտ բնակեցված է եղել Կարսի օկրուգը։ Ինչպես ամբողջ Կովկասում, այնպես էլ Կարսի մարզում արական բնակչությունը գերակշռում էր իգականին։ Միջին թվով 1897 թ. մարզի 100 տղամարդուն ընկնում էր 81 կին, իսկ 1914 թ.՝ 94 կին։ Այստեղ մարդի արական և իգական սեռերի քանակական արագ մերձեցման տենդենց ենք նկատում։

Մարզի տնտեսական հետամնացության և արդյունաբերության բացակայության հետևանքով քաղաքային կյանքը թույլ էր զարգացած։ Մարզն ուներ մեկ քաղաք (Կարս) և երեք քաղաքավան (Կաղզվան, Արդահան և Օլթի)։ Մեզ հետաքրքրող տարիներին այդ քաղաքների բնակչությունը ունեցել է հետևյալ աճը.

Քաղաքները	1897 թ.	1914 թ.
Կարս	20805 մարդ	30086 մարդ
Կաղզվան	10518 „	11145 „
Արդահան	4142 „	4113 „
Օլթի	2373 „	3258 „
Ընդամենը . . .	37838 մարդ	48602 մարդ

3 Տե՛ս «Общий свод по империи результатов разработки данных первой всеобщей переписи населения, произведенной 28 января 1897 г.», т. I, СПб., 1905, էջ 3 (այսուհետև՝ «Общий свод по империи...»).

4 Տե՛ս «Кавказский календарь на 1915 г.», отдел статистический, էջ 237։

Այս թվերից երևում է, որ 1897—1914 թթ. առանձնապես մեծ աճ էր ունեցել Կարսի բնակչությունը։ 1897 թ. մարզի քաղաքային բնակչության ընդհանուր թվից (37838 մարդ) Կարսին ընկնում էր 20805 մարդ, կամ մարզի ամբողջ քաղաքային բնակչության 55 տոկոսը, իսկ 1914 թ.՝ շուրջ 66 տոկոսը։

1897 թ. մարդահամարի տվյալներով մարզի քաղաքներում ապրող ընտանիքների թիվը հասնում էր 4816-ի (26390 արական և 11448 իգական սեռի բնակիչներով), ընդամենը 37838 մարդ, կամ մարզի ողջ բնակչության 13,02 տոկոսը[5]։

Մարզի քաղաքային բնակչության ճնշող մեծամասնությունը եղել են հայերը, որոնց ձեռքում էր կենտրոնացված տեղի արհեստագործության ու առևտրի մեծագույն մասը։ Քաղաքաբնակ հայերի թիվը ներկայացնում էր հետևյալ պատկերը[6].

Քաղաքները	1897 թ.			1914 թ.		
	Բնակչության թիվը	Հայերի թիվը	Հայերի տոկոսը	Բնակչության թիվը	Հայերի թիվը	Հայերի տոկոսը
Կարս . . .	20805	10332	49,6	30086	25252	83,9
Կաղզվան .	10518	3913	37,2	11145	8554	76,8
Արդահան .	4142	1315	31,7	4113	2063	50,2
Օլթի . . .	2373	1056	44,4	3258	2188	67,2
Ընդամենը	37838	16616	43,9	48602	38057	78,3

Կարս քաղաքի բնակչությունը զբաղվում էր արհեստներով, առևտրով, տնայնագործական արդյունագործությամբ։ Կարս քաղաքը, առավել ևս մարզի օկրուգային կենտրոնները, չէր կարելի լիարժեք քաղաքներ համարել, քանի որ արդյունաբերության բացակայության հետևանքով նրանցում իսկական քաղաքային կյանքը թույլ էր զարգացած։ Ինչպես օկրուգային կենտրոնների, այնպես էլ Կարսի բնակչության մի զգալի մասը զբաղվում էր երկրագործությամբ և անասնապահությամբ. միայն Կարս քաղաքն ուներ 4000 դեսյատին մշակելի քաղաքային վարելահող[7]։

Կարսի մարզի հայ բնակչության թիվը 1897 թ. կազմել է 73406 մարդ (կամ մարզի ընդհանուր ազգաբնակչության 25,26 տոկոսը)[8], 1910 թ.՝ 101157 մարդ (28,9 տոկոս)[9], իսկ 1914 թ.՝ 114938 մարդ (29,4 տոկոս)[10]։ 1897 թ. հայերի 63,6 տոկոսը ապրում էր Կարսի օկրուգում, իսկ 29,5 տոկոսը՝ Կաղզվանի օկրուգում[11]։

---

5 Տե՛ս «Общий свод по империи...», т. I, էջ 32—33.

6 Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., LXIV, Карсская область», СПб., 1904 (այսուհետև՝ «Первая всеобщая перепись...»), էջ 34—35; «Кавказский календарь на 1915 г.», էջ 234—237։

7 Տե՛ս Վրաց. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 1438, ց. 1, գ. 494, էջ 8։

8 Տե՛ս «Общий свод по империи...», т. II, էջ XV։

9 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 375, ց. 1, գ. 23, թ. 101։

10 Տե՛ս «Кавказский календарь на 1915 г.», էջ 236—237։

11 Տե՛ս «Первая всеобщая перепись...», էջ VIII։

Հայերից հետո մարզի սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքում իրենց խաղացած դերով աչքի են ընկել ռուսները։ Ինչպես հայտնի է, Կարսի մարզի միացումից հետո ցարական կառավարությունը, ելնելով իր գաղութային շահերից, ձգտում էր մարզը բնակեցնել հատկապես ռուսներով։ Կովկասի փոխարքայի կարգադրություններից մեկում ասված է. «Կովկասում և Անդրկովկասում տեղավորված ռուս գաղութաբնակներին՝ ուղղափառներին, մոլոկաններին, դուխոբորներին, զինվորական բնակավայրերի ավելցուկ մասը կամավոր կերպով գաղթեցնել Կարսի մարզը»[12]։

1897 թ. ռուս բնակչության թիվը մարզում հասնում էր 27856 մարդու, իսկ 1914 թ. որոշ աննպաստ հանգամանքների հետևանքով նրանց թիվը բավականաչափ նվազեց, կազմելով 19770 մարդ։ XX դարի սկզբներին մարզի բնակչության մեջ շոշափելի տոկոս էին կազմում նաև դրսեկ հույները։ 1897 թ. նրանց քանակը եղել է 32593 մարդ, իսկ 1914 թ.՝ մոտավորապես 58935։

Մարզի մահմեդական բնակչության մեջ իրենց թվաքանակով տիրապետող էին թուրքերը և քրդերը, որոնք համապատասխանաբար կազմում էին, 1897 թ.՝ 63547 և 42968 շունչ, իսկ 1914 թ.՝ 79191 և 60439 շունչ։ Հարկ է նշել, որ 1914 թ. մարզի թուրք բնակչության շուրջ 63 տոկոսը բնակվում էր Արդահանի օկրուգում։

Դեմոգրաֆիական վիճակագրության մեջ առանձնապես էական նշանակություն ունեն բնակչության սոցիալական կազմին և զբաղմունքին վերաբերող տվյալները։ Դժբախտաբար, Կարսի մարզի բնակչության սոցիալական կազմին վերաբերող նյութերը բացակայում են։ Դա է պատճառը, որ մեր ձեռքի տակ եղած տվյալների հիման վրա աշխատել ենք մոտավոր ճշտությամբ որոշել բնակչության սոցիալական կազմի պատկերը։

Կարսի մարզի գյուղական բնակչությունը ըստ գերակշռող զբաղմունքի բաժանվում էր երկու հիմնական խմբերի՝ հողագործների և անասնապահների։ Գերազանցապես հողագործներ էին հայերը, ռուսները, թուրքերը, հույները, թուրքմենների և կարափափախների մի մասը, իսկ քրդերը և մասամբ թուրքմեններն ու կարափափախները, գլխավորապես զբաղվում էին անասնապահությամբ։ 1897 թ. մարդահամարի տվյալներով մարզի բնակչության շուրջ 65 տոկոսի հիմնական զբաղմունքը հողագործությունն էր[13]։

Կարևոր է նշել գյուղատնտեսության մեջ զբաղված մշտական և ժամանակավոր վարձու աշխատողների թվակազմը։ Միայն մշտական վարձու ծառա և օրամշակ ունեցող տնտեսությունների թիվը 1897 թ. եղել է 1768, որը կազմում էր գյուղացիական բոլոր տնտեսությունների մոտ 5,3 տոկոսը։ Ըստ 1897 թ. մարդահամարի Արևելյան Հայաստանում գրանցված բոլոր մշտական վարձու աշխատողների մոտ մեկ երրորդը բաժին էր ընկնում Կարսի մարզին[14]։ Այստեղ 1897 թ. արձանագրվել էր 2143 տղամարդ և 2733 կին ծառա և օրամշակ, որոնց մի զգալի մասը՝ 1762 մարդ, կազմում էին հայերը[15]։

---

12 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 505, թ. 71—72։

13 Տե՛ս «Первая всеобщая перепись...», էջ 72—73։

14 Տե՛ս А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне, Ереван, 1959, էջ 131։

15 Տե՛ս «Первая всеобщая перепись...», էջ 72—73, 78—79։

Մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը գյուղացիներից էր բաղկացած։ 1897 թ. մարզում կային 132460 արական և 111397 իգական սեռի գյուղացիներ՝ ընդամենը 243857 մարդ։ Այսինքն մարզի բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ գյուղացիական բնակչության տեսակարար կշիռը կազմում էր 83,9 տոկոս։ Գյուղացիներ կատեգորիայի մեջ են մտել նաև 14405 քաղաքային բնակիչներ, որոնք, մարզի քաղաքներում ապրելով հանդերձ, իրենց սոցիալական դիրքով ու զբաղմունքով չեն տարբերվել գյուղացիական բնակչությունից։ Եվ քանի որ մարզի գրեթե բոլոր հողերը, Ռուսաստանին միացվելուց հետո, ճանաչվեցին պետական սեփականություն, հետևապես այնտեղ ապրող գյուղացիներն էլ հայտարարվեցին պետական գյուղացիներ։ Մարզում տերունական (մասնավոր) հողատիրությունը շատ փոքր տոկոս էր կազմում։ Մինչև XX դարի սկիզբը գյուղի սոցիալական շերտավորումը այն աստիճանի չէր հասել, որ գյուղական բուրժուազիան որոշակի տոկոս կազմեր։ Հետագա տարիներին գյուղում սոցիալական կազմի պատկերը բավականաչափ փոխվել էր՝ ի հաշիվ կուլակության քանակական և որակական աճի։

1897 թ. մարդահամարի տվյալներով մարզի բնակչությունը ըստ սոցիալ-դասային կառուցվածքի բաշխվում էր հետևյալ կերպ. ժառանգական ազնվականների դաս և նրանց ընտանիքների անդամներ՝ 2089 մարդ (1150 ար. և 939 իգ.), որից միայն ռուսներ՝ 759 մարդ. քրիստոնյա դավանանքի հոգևորականների դաս և նրանց ընտանիքի անդամներ՝ 1332 մարդ (733 ար. և 599 իգ.), որից հայեր և հույներ՝ 1163 մարդ. վաճառականական դաս՝ 241 մարդ (128 ար. և 113 իգ.), որից միայն հայեր՝ 219 մարդ. քաղաքային դաս (քաղքենիներ)՝ 15871 մարդ. գյուղացիներ՝ 243839 մարդ (132460 ար. և 111379 իգ.)[17]։

Համեստ տոկոս էր կազմում արհեստավորական դասը։ Ռուսական տիրապետության տարիներին արհեստագործությունը առաջադիմել էր։ Մարզի նահանգապետի հաշվետվության տվյալներով, եթե 1897 թ. մարզի արհեստավորների ընդհանուր թիվը, ենթավարպետներով և աշակերտներով, հասնում էր 2405 մարդու[18], կազմելով մարզի ողջ բնակչության 0,9 տոկոսը, ապա տասը տարի անց՝ 1907 թ. այն հասնում էր 4346 մարդու[19] կամ՝ 1,43 տոկոս։

Կարսի մարզի ազգաբնակչության բնորոշ առանձնահատկություններից մեկն այն էր, որ նրանում զգալի թիվ էին կազմում այսպես կոչված ժամանակավոր բնակվողները (временно проживающие)։

XIX դարի վերջին քառորդում, մարզում հող ձեռք բերելու և բնակություն հաստատելու նպատակով, այնտեղ էին գաղթում թե՛ կովկասյան նահանգներից և թե՛ Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերից։ Սկզբնական շրջանում այդ բանը, այսպես թե այնպես, հնարավոր էր դառնում ազատ հողային տարածությունների առկայության շնորհիվ։ Բայց հետագայում դրսից կատար-

16 Նույն տեղում, էջ 106—107։
17 Տե՛ս նույն տեղում։
18 Տե՛ս «Обзор Карсской области за 1897 г.», Карс, 1898, էջ 17։
19 Տե՛ս «Обзор Карсской области за 1907 г.», Карс, 1908, էջ 18։

վող նման բնակեցում չթույլատրվեց և եկվոր տարրերի մշտական հոսքը դեպի մարզ միշտ չէ, որ իրավաբանական-պաշտոնական զրանցում էր ստանում։ Բնակչության այդ կարգախմբին պետք է դասել նաև արևմտահայ այն պանդուխտներին, որոնք փող ձեռք բերելու հույսով ժամանակավոր աշխատանք էին փնտրում մարզում, ինչպես նաև օտարահպատակ այն ձեռնարկատեր-արդյունաբերողներին, որոնք մարզում հիմնել էին պանրի, յուղի և հանքային հարստությունների մշակման կամ արդյունահանման ձեռնարկություններ։

Մարզում հաստատված բնակիչների այս խմբերը չունեին ռուսական հպատակություն, զրկված էին քաղաքացիական իրավունքներից և մեկ ընդհանուր անվամբ կոչվում էին ժամանակավոր բնակվողներ։

1897 թ. մարզի ժամանակավոր բնակվողների թիվը կազմում էր 22619 մարդ կամ ողջ ազգաբնակչության 7,78 տոկոսը[20]։ Դրանց մի ստվար մասը ապրում էր Կարս քաղաքում։ 1900 թ. մարզում հաշվվող 32705 ժամանակավոր բնակվողների կեսից ավելին՝ 18508 մարդ օտարահպատակ հայեր էին, որոնցից 3750 մարդ կենտրոնացված էր Կարս քաղաքում[21]։ Մարզի ժամանակավոր բնակվողների քանակը գնալով մեծանում էր (1907 թ.՝ 37270 մարդ[22], 1910 թ.՝ 45618 մարդ[23], 1915 թ.՝ 55814 մարդ)[24]։ Նրանց մեծագույն մասը մարզի բնակչության ամենաաղքատ տարրերն էին, որոնք չնչին օրավարձով (30—40 կոպ.) աշխատում էին մարզի պետական կառույցների, խճուղիների շինարարության վրա, իսկ երբեմն էլ՝ գյուղատնտեսության մեջ (հատկապես խոտհնձի և բերքահավաքի ժամանակ)։ «Մուրճի» թղթակից Երվանդ Ղազարյանը «Բանվորների դրությունը Կարսում» հոդվածում, անդրադառնալով այս կատեգորիայի «ժամանակավոր բնակվողների» կացությանը, հետևյալ կերպ էր բնութագրում այն. «Ներկայումս Կարսի զանազան մասերում՝ թե՛ քաղաքի մեջ և թե՛ քաղաքից դուրս՝ ամառը, արևգակի այրող ճառագայթների տակ, գարնանը և աշնանը՝ ցրտի, անձրևների և կտրող քամիների ենթարկված՝ աշխատում են բազմաթիվ անտուն և աղքատ մարդիկ, որոնք տեղական լեզվով կոչվում են «իրղատներ» (բանվորներ)։ Նրանք բոլորն էլ օտարական են, Տաճկահայաստանի գյուղերից և քաղաքներից ճնշված, հալածված և օտարության մեջ իրանց ապրուստը որոնող մարդիկ։ ...Սրանց թե՛ տնտեսական և թե՛ հոգեկան կյանքը շատ ողբալի տպավորություն է անում ամեն մի զգայուն մարդու վրա»[25]։

Ցարիզմը Կարսի մարզը դիտում էր որպես մի ծայրամաս, ուստի, բնականաբար, խոսք չէր կարող լինել այնտեղ կրթական-դպրոցական գործի բարձր դրվածքի մասին։ Կայսրությանը նոր միացված երկրամասի տնտեսական և քաղաքական յուրացման տեսակետից կարևոր էր մետրոպոլիայի մայրենի

---

20 Տե՛ս «Первая всеобщая перепись...», էջ 33։

21 Տե՛ս «Ведомость о распределении временнопроживающего населения Карсской области по вероисповеданиям и национальностям к 1 января 1900 г.», թ. 1։

22 Տե՛ս «Обзор Карсской области за 1907 г.», էջ 3։

23 Տե՛ս «Обзор Карсской области за 1910 г.», Карс, 1911, էջ 3։

24 Տե՛ս «Кавказский календарь на 1917 г.», отдел статистический, Тифлис, 1916, էջ 200—201։

25 «Մուրճ», 1890, № 1, էջ 122—123։

լեզվի (ռուսերենի) տարածումը։ Այդ պատճառով մարզի միացումից կարճ ժամանակ անց բացվեցին ժողովրդական կրթության մինիստրության մի շարք դպրոցներ և ուսումնարաններ, որոնցում, որպես կանոն, դասավանդումը տարվում էր ռուսերեն լեզվով։ Բացի պետական դպրոցներից մարզում գործում էին մասնավոր տիպի եկեղեցական-ծխական տարրական դպրոցներ, որտեղ միայն գրաճանաչություն էին սովորեցնում։

1897 թ. մարզում բոլոր գրագետների թիվը հասնում էր 31339 մարդու, որը կազմում էր ամբողջ ազգաբնակչության 10,78 տոկոսը։ Գրագիտության տեսակարար կշիռը համեմատաբար բարձր էր քաղաքային բնակչության մոտ։ Այդ նույն մարդահամարի տվյալներով, գրագետ էր մարզի քաղաքային բնակչության 38,8 տոկոսը, մինչդեռ գյուղական բնակչությունից գրագետ էր ընդամենը 6,6 տոկոսը։ Գրագետների թվից 30127 մարդ կամ 96,13 տոկոսը տարրական (սկզբնական) կրթություն ունեին և միայն մի փոքր մասը՝ 1212 մարդ կամ 3,9 տոկոսը, ունեին միջնակարգ և բարձրագույն կրթություն[26]։

1900 թ. Կարսի մարզում արդեն կար բոլոր տիպի 106 դպրոց՝ 7131 երկսեռ սովորողներով[27], որից 32 դպրոցը՝ 2552 սովորողներով պետական էին և գտնվում էին կովկասյան ուսումնական օկրուգի ենթակայության տակ։ Պետական դպրոցներում սովորող աշակերտության մեծ մասը (56,3 տոկոսը) կազմում էին հայերը[28]։

1910 թ. Կարսի մարզում կար պետական 86 դպրոց և ուսումնարան (որից 12-ը Կարսում՝ 1376 սովորողներով)[29], 67 եկեղեցական-ծխական և 143 մահմեդական դպրոցներ (ընդամենը 296 դպրոց և ուսումնարան)[30]։ Այդ բոլոր դպրոցներում և ուսումնարաններում սովորում էին 13746 երկսեռ աշակերտներ, չհաշված մարզի հայ եկեղեցական-ծխական դպրոցները։ Բերված թվերից երևում է, որ 1910 թ. մարզի 2545 բնակչին ընկնում էր մեկ դպրոց։ 1912 թ. մարզի դպրոցական ցանցը ներկայացնում էր հետևյալ պատկերը. կար բոլոր տիպի 369 դպրոց և ուսումնարան՝ 22023 սովորողներով, որոնց ավելի քան 40 տոկոսը հայեր էին[31]։ 1914 թ. վերջերին միայն կովկասյան ուսումնական օկրուգի ենթակայության տակ գտնվող կարսյան երկու (I և II) տեսչություններն ունեին 202 դպրոց և ուսումնարան՝ 12704 սովորողներով[32]։

Ինչպես երևում է բերված թվերից, ռուսական տիրապետության տարիներին կրթական գործը մարզում բավական առաջադիմել էր։

Այս բնագավառում ևս Կարսի մարզի միացումը Ռուսաստանին ունեցել է դրական նշանակություն և հանդիսացել է նշանակալից մի քայլ՝ նրա բնակչության սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման ճանապարհին։

---

26 Տե՛ս «Первая всеобщая перепись», էջ 25։

27 Տե՛ս «Обзор Карсской области за 1900 г.», Карс, 1901, էջ 35։

28 Տե՛ս «Памятная книжка и адрес-календарь Карсской области на 1902 г.», год. I, Тифлис, 1901 (отд. приложение).

29 Տե՛ս նույն տեղում, էջ 36։

30 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 375, ց. 1, գ. 23, թ. 112։

31 Տե՛ս Ա. Մ. Պողոսյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում, Երևան, 1961, էջ 181։ Տե՛ս նաև Д. С. Заврнев, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1917, էջ 26։

32 Տե՛ս «Отчет о состоянии учебных заведений кавказского учебного округа за 1914 г.», ч. I, Тифлис, 1915, էջ 109—114։

НАРОДОНАСЕЛЕНИЕ КАРССКОЙ ОБЛАСТИ (1897—1914 гг.)

А. М. АКОПЯН

(Резюме)

В статье дан общий обзор населения Карсской области за время от всеобщей переписи 1897 г. до начала первой мировой войны. Первостепенная роль в общественно-экономической жизни разнородного населения области принадлежала армянам, которые в начале XX в. составляли относительное большинство, а в начале первой мировой войны—почти треть всего населения области. На фоне экономической деятельности жителей Карсской области рассматривается динамика населения, его национальный и социальный состав, степень грамотности и др.